ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 178

21 նոյեմբերի 2013 թվականի

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԱՄԱԼՅԱ ԵՎ ՀԱՅԿԱԶ ԳԱԼՍՏՅԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մարալիկ քաղաքի Թումանյան փողոցի N 29/3 հասցեի բնակիչ Հայկազ Գալստյանի և Թումանյան փողոցի N 39 հասցեի բնակիչ Ամալյա Գալստյանի 14.11.2013 թվականի դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայկազ և Ամալյա Գալստյանների կաղմից ք. Մարալիկ Թումանյան փողոցի N 39 հասցեում 2000 թ կառուցվել է անասնագոմ, 1995թ կից կառույց, սակայն սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել, միաժամանակ օրինական հատկացված 0.15 հա հողամասին կից ավել օգտագործվում է 0.0283 հա հողամաս, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված ցանկում, ուստի ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 37 հոդվածի դրույթներով <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տներին վերաբերյալ>> ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների դրույթներով ***որոշում եմ***

1. Մարալիկ քաղաքի բնակիչներ Ամալյա Մուշեղի Գալստյանի (ծնված 04.04.1931թ.) և. Հայկազ Վոլոդյայի Գալստյանի (ծնված 27.10.1956թ.) ք. Մարալիկ Թումանյան փողոց N 39 հասցեում 2000թ կառուցված անասնագոմի, 1995թ կառուցված կից կառույց,ինչպես նաև օրինական հատկացված 0.15 հա հողամասի <<Իրավունքը հաստատող փաստաթղթերի չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի վերաբերյալ>> ՀՀ օրենքի համաձայն 0.0283 հա անհատույց հատկացված հողամասի գույքային իրավունքները վերականգնել և ճանաչել նրանց սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանում պետական գրանցում կատարելու նպատակով:

Քաղաքապետ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ